ԷՄՄԱ ՏԻԳՐԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

1997 թ. հունիսի 12-ին կյանքից հեռացավ հայ պատմագիտությանն իրեն անմնացորդ նվիրած գիտնականը՝ ավագագույն աղբագրագետ, պատմական գիտությունների դոկտոր, Հնագիտության և աղբագրության ինստիտուտի գլխավոր գիտական աշխատակից Էմմա Տիգրանի Կարապետյանը։

Էմմա Կարապետյանը ծնվել է 1920 թ. հուլիսի 10-ին, ՀՀ Արմավիրի մարզի համանուն գյուղում, մանկավարժի ընտանիքում։ Միջնակարգ կրթությունն ստացել է Մոսկվայում, ուր տեղափոխվել էր նրանց ընտանիքը 1930 թ.։ 1938 թ. ընդունվել է Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։ Հայրենական մեծ պատերազմն սկսվելու պատճառով (1941 թ.) վերադարձել են Երևան, ուր և շարունակել է կրթությունը պետական համալսարանի պատմության ֆակուլտետում և ավարտել է 1944 թ.։

1945 թ. Է. Կարապետյանն ընդունվում է Հայաստանի ԳԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան «Հայ աղբագրություն» մասնագիտությամբ և ուղարկվում է Մոսկվա՝ ԽՍՀՄ ԳԱ Աղբագրության ինստիտուտ։ Նրա գիտական դեկավարն է դառնում հայրենական գիտության ականավոր հետազոտող, պատմական գիտությունների դոկտոր Մարկ Օսիպովիչ Կոսվենը, որ բախտորոշ նշանակություն է ունենում աղբագրագետ Է. Կարապետյանի հետաքրքրությունների շրջանակը վերջնականապես ճշգրտելու խնդրում։ 1949 թ. հաջողությամբ ավարտելով ասպիրանտուրան, պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն՝ «Գլխագիրը հայոց հարսանեկան սովորություններում և դրա սոցիալ-տնտեսական արմատները» թեմայով։

Է. Կարապետյանի շուրջ կեսդարյա արդյունավետ ստեղծագործական գործունեությունն ընթացել է Գիտությունների ակադեմիայի համակարգում, ուր կրտսեր գիտաշխատողից հասել է գլխավոր գիտաշխատողի և բաժնի վարիչի պաշտոնի, պատմական գիտությունների դոկտորի աստիճանի։

Է. Կարապետյանը 1949—1953 թթ. եղել է Հայաստանի պատմության թանգարանի, 1953—1955 թթ.՝ ԳԱ Պատմության ինստիտուտի գիտաշխատող։ Այնուհետև, 1959 թ. գիտահետազոտական նոր կենտրոն՝ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և աղբագրության ինստիտուտ ստեղծվելու օրից մինչև մահ նրա գիտական գործունեությունն անբակտելիորեն ու անմնացորդ կապված մնաց այդ հաստատության հետ, որի հիմնադիրներից մեկն էլ ինքն էր։

Է. Կարապետյանի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են առավելապես հայոց ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների շրջանակը՝ ընդհուպ մինչև նորագույն ժամանակները, որին մեծապես նպաստել է նաև ժամանակի աղբագրական կովկասագիտության բուռն վերելքը։ Լինելով հիմնավոր աղբագրական կրթություն ստացած հազվագյուտ մասնագետներից մեկը Հայաստանում՝ նա բազմափորձ դաշտային աղբագրագետի հմտություններն արդյունավետորեն համադրել է հետազոտող-տեսաբանի բարձր որակավորման հետ։ Հնագիտության և աղբագրության ինստիտուտի բազմամյա աղբագրական գիտարշավների ընթացքում հավաքած դաշտային նյութը զուգակցած նախնադարյան շրջանի աղբագրական նյութի և միջնադարյան գրավոր սկզբնաղբյուրների արվյալների մանրակրկիտ քննության հետ, պատմահամեմատական հետազոտական վերլուծության մեթոդի կիրառմամբ, Է. Կարապետյանը լուսաբանել է հայոց ամուսնության, ընտանիքի և ազգակցական հարաբերությունների ձևերն ու էությունը սոցիալ-նորմատիվային մշակույթի և

ծիսական ավանդույթների ու արարողակարգի բարդ համակարգերում։ Նրա «Գլխագիր հայոց հարսանեկան սովորույթներում և դրա սոցիալ-տնտեսական արմատները» (1950), «Հայոց ընտանեկան հմայանքը» (1958), «Հայոց արենակցա-ազգակցական «ազգ» խումբը» (1966), «Հայոց ոժիտը» (1973) և այլն հիմնարար մենագրություններ ևս ոչ միայն հայ, այլև կովկասագիտական ազգագրության մեջ։ «Հայոց ընտանեկան հարաբերությունները և պատրոնիմիան» աշխատությունը է. Կարապետյանը պաշտպանեց որպես դոկտորական ատենախոսություն (1967 թ., Թբիլիսի)։

է. Կարապետյանի գիտական ժառանգությունն ընդգրկում է նաև դիտության այլ բնագավառներ։ 1950—1970-ական թթ. հանրապետական և համամիութենական մամուլում նա հանդես է եկել ինչպես հայ ազգագրության կենսական հիմնահարցերը լուսաբանող «Խորհրդահայ ազգագրության մի քանի խնդիրներ» (1952), «Խորհրդային Հայաստանի բանվորների արտադրական կենցաղի ուսումնասիրման փորձ» (1953), այնպես էլ անցյալի պատմագիտական հասումներն ընդհանրացնող («Ազգագրական հանդես» հայերեն պարբերականի 60-ամյակը», 1956), մի շարք հոդվածներով։ Դ. Վարդումյանի հեղինակակցությամբ նա աշխատասիրել է «Հայաստանի կոլտնտեսական ընտանիքը և ընտանեկան կենցաղը» (1963) մենագրությունը։ է. Կարապետյանը գործուն մասնակցություն է ցուցաբերել «Աշխարհի ժողովուրդները» մատենաշարի «Կովկասի ժողովուրդները» հատորի (Մոսկվա, 1962) «Հայեր» բաժնի շարադրմանը։ Նա նաև դպրի աշխատանք է կատարել Հայաստանի պատմաազգագրական ատլասի կազմման գործում՝ ղեկավարելով տարածի ու զարդարանքի բաժնի շարադրանքը և գրելով «Հայոց գլխանոցները» գլուխը (քարտեզներով և նկարագրմամբ)։

է. Կարապետյանի բազմաբնույթ գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում էթնոսոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպումը Հայաստանում։ Նրա շնորհիվ էր, որ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում ժամանակի ընթացքում կազմավորվեց էթնոսոցիոլոգիայի բաժինը (1974—1981), որը գլխավորեց շուրջ մեկուկես տասնամյակ, մինչև 1995 թ.։ Ըստ էության, է. Կարապետյանի անվան հետ է կապված էթնոսոցիոլոգիական հետազոտությունների բոլորովին նոր, արդիական ուղղության զարգացումը Հայաստանում՝ առաջիններից մեկը երկրում։ Սկզբնապես ուսումնասիրություններն արվում էին համամիութենական ծրագրով։ է. Կարապետյանը իրեն հատուկ շնորհությամբ և պատասխանատվությամբ ոչ միայն ղեկավարում էր էթնոսոցիոլոգիական հետազոտությունների կազմակերպումը, այլև գործուն մասնակցություն էր բերում որպես ուսումնասիրման նախնական օբյեկտ ընտրված՝ Երևանի բնակիչների հարցմանը։ Յու. Վ. Հարությունյանի հետ նրա խմբագրությամբ լույս ընծայվեց «Երևանի բնակչությունը. էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություն» (1986) կոլեկտիվ մենագրությունը, որի կարևոր բաժիններից մեկը՝ «Ընտանիքի էթնիկական տիրահատկություններ», պատկանում է իր գրչին։ Հետագա տարիներին է. Կարապետյանի անմիջական ղեկավարությամբ և առանցքային մասնակցությամբ իրականացվեցին Հայաստանի զանազան պատմաազգագրական մարզերի քաղաքային և գյուղական բնակչության էթնոսոցիոլոգիական հարցումները ու հետազոտությունը, ինչպես նաև Երևանի բնակչության կրկնակի հարցումը (1992), որի արդյունքը եղավ նրա «Հայոց ընտանիքը և ազգակցական հարաբերությունները» աշխատությունը (ձեռագիր)։

է. Կարապետյանը, որպես գիտնական, միշտ ունեցել է քաղաքացիական ակտիվ դիրքորոշում։ Նա տարիներ ի վեր եղել է Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ընթացիկ դիտական խորհրդի անդամ, Հնագիտության և ազգագրության մասնագիտացմամբ դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության դիտական խորհրդի փոխնախագահ, ղեկավարել է մի շարք ասպիրանտների ու դիսերտանտների։ Նա շատ հարգված է եղել ոչ միայն Հայաստանի, այլև Թբիլիսիի, Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի և արտասահմանի գործընկերների շրջանում, զեկուցումներով հանդես է եկել ազգագրագետների և մարդաբանների միջազգային կոնգրեսներում (Մոսկվա, Վանվոսկեր)։

Էմմա Կարապետյանը սկզբունքային ու նպատակասլաց մարդ էր թե՛ գիտության մեջ, թե՛ կյանքում, կարողանում էր շուրջը համախմբել համախոհների ամուր կոլեկտիվ՝ որպես քննախույզ հետազոտող միշտ հեղինակություն մնալով իր կրտսեր թե ավագ գործընկերների համար։ Նրա հիշատակը երկար կմնա ճանաչողների հուշերում, իսկ դիտական ժառանգությունը ուսանելի՝ մասնագետների համար։

Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ